

**ԱՂՎԱՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

Ռուբեն Չակոբյան (Թարումյան)

Կովկասյան լեռների տարածաշրջանը Չայքի հարեանն է եւ հայոց լեզվում այս տարածքի լեզուներից որոշ թվով փոխառություններ են եղել: Օրինակ՝ *ճկույթ*, *ճանճ* եւ այլն: Չակառակ ազդեցություն նույնպես եղել է: Արեւելակովկասյան լեզուներում հայերենից փոխառվել են, օրինակ, ուտ. *kala* «կաղ», ուտ. *händ* «արտ»¹ եւ այլն: Սույն գեկուցման նյութ են Աղվանից աշխարհին առնչվող որոշ ցեղանուններ եւ տեղանուններ, որոնք նույնպես կարող են հայկական ծագում ունենալ:

Կուր

Աշխարհի շատ գետերի անուններ որեւէ լեզվով նշանակում են հենց «գետ» կամ «ջուր», կամ ջրի որեւէ հատկություն՝ «հոսող», «արագ», «պղտոր» եւ այլն: Այդպիսին են *Դոն* ու *Դանուբը* (իրան. *dānu* «ջուր»), *Ենիսեյը* (Էվենկ. *իոնեսսի*՝ «մեծ ջուր»), *Լենան* (Էվեն. *եյու Ենե*՝ «մեծ գետ»), *Ռեյնը* (հեն. *reijə*՝ «հոսել»), *Արագվիս* (հայ. «արագ») եւ այլն:

Կուր անվան հիմքում նույնպես առաջարկվում է տեսնել «ջուր» իմաստը, արտահայտված կովկասյան տարածաշրջանի լեզուներով: Այսպես, Գ. Չահուկյանը գրում է. «Արեւելակովկասյան ծագում ունի *Կուր գետի անունը. կրիպերեն*² եւ բուղուխերեն լեզուներով *Կուր* նշանակում է «գետ», ուտիերեն՝ «ձոր», դուևպիբերեն³ *կուրո*՝ «առու» եւ այլն»⁴: Սակայն ուշագրավ է *Կուր* անվան նմանությունը նաեւ հայերեն *գումն*՝ «ջրի ավազան» բառին: Նմանությունը ավելի մեծ է Սալմաստի բարբառի *կում* տարբերակում⁵: Մոտիկ են նաեւ իմաստները. «որեւէ բան, որի մեջ կա ջուր»: Սակայն ինքը *գումն* բառը Աճառյանը համարում է փոխառություն ասոր. *gūrūd*՝ «դուլ», «ջրաման» բառից: Սրան է Աճառյանը կապում նաեւ արաբ. *jurn* «բաղնիքի աւազան կամ մեջը լուացվելու քարե աւազան»: Մյուս կողմից այս բոլոր բառերն իրենց հերթին չափազանց հիշեցնում են հայերեն *ջուր* բառը:

¹ Չ. Մարտիրոսյան, Չայոց լեզվի պատմականությունը Արցախի և Ուտիքի տարածքներում

² Ավելի ճիշտ՝ *քրոնծերեն*

³ Ավելի ճիշտ՝ *հուևպիբերեն*

⁴ Գ. Բ. Չահուկյան, Չայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե. 1987, էջ 615:

⁵ Չ. Աճառյան, Արմատական բառարան, Ե. 1971, էջ. I, 597:

Ըստ Պոկորնու բառարանի հայ. *ջուրը* կարող է բխել հեն. **ūr* արմատից, հետեւապես այն գտնվում է լատ. *ūrīna*, հուն. *αὔρα* «ջուր» բառերի շարքում (Աճառյանը հանգում է հենց այս կարծիքին), իսկ *գայր* «ցեխ», «տիղմ» արմատը՝ նույն նախաձեւի մեկ այլ տարբերակից. **yer*՝ ավեստ. *vairi*- «ծով», տոխար. *war* «ջուր» շարքում (Աճառյանն այս բառը թողնում է չստուգաբանված): Հատկանշական է, որ Աճառյանը որպես հնդեւրոպական նախալեզվի այդ երկու ձեւերի կապ տեսնում է պրուս. *wurs* «ճահիճ» բառը: Սակայն այդ դեպքում նաեւ հայ. *գուռն* բառը կարելի է դիտել, որպես այդ երկու ձեւերը միավորող օրինակ: Ինչ վերաբերում է բառավերջի հնչյունին, ապա *գուռ(ն)* բառը տեղավորվում է *դուռն—դուր, մառն—մայր, բեռն—բեր* բառերի հետ մեկ հարացոյցում: Երկրորդ դեպքում ունենում ենք ճիշտ մեր դեպքը՝ *գուր*, կամ բարբառային *կուռ*-ի օրինակով հենց *կուր*:

Ինչ վերաբերում է արմատի փոխառված լինելու հարցին, ապա սա կարող է նշանակել, որ փոխառությունը եղել է հակառակ ուղղությամբ: Արաբ. *jurn*-ի դեպքում այդ մասին անուղղակիորեն խոսում է այդ արմատի աննշան զարգացումը արաբերենում: Սեմականներում այս բառի փոխառյալ լինելու եւս մի նշան կարող դիտվել դրա բացակայությունը աբադերեն աղբյուրներում: Մինչդեռ հայերենում ըստ Աճառյանի այն առկա է շատ գավառականներում եւ ունի իմաստային ամենատարբեր զարգացումներ. «աղբյուրի առջեւի ավազան», «ախոռի ավազան», «լոգանք», «խմորի տաշտ», «շերամ պահելու համար՝ կովի թրիքից շինված աման», «շան լակաման», «հնձան», «երկաթագործի քարե ավազան», «ջրորդան»: Այս վերջին իմաստը՝ «խողովակ, որով ջուր է հոսում», մոտենում է «գետ» իմաստին, ուստի եւ չի կարելի բացառել, որ հնում այն կարող էր ունենալ այդ՝ «գետ» իմաստը, որը հետո կորել է: Գուցե հենց այն պատճառով, որ *կուր* բառը սկսել է ընկալվել որպես հատուկ անուն:

Փորձելով հիմնավորել *կուր* բառի փոխառված լինելը հայերենում Հ. Կարապոզյանը գրում է, որ *կուր* բառը «*հետագայում յայտնի է դառնում նաեւ Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւելյան նահանգների բարբառներում, որտեղ կուր նշանակում է «գետ», «ձոր»*»: Այդ բառը նա տեսնում է Արցախի եւ Սյունիքի *Բերդակոր, Կուրանք, Կուրավանք, Լոսուկոր, Հոյնցկոր* տեղանուններում: Մուրտազալի Գաջիեւի բանավոր դիտողության համաձայն *կուր* բաղադրիչով տեղանուններ կան նաեւ *Կուր* գետի ձախափնյակում: Սակայն Հյուսիսային Կովկասի համար Ա. Վ. Տվյորդիի Տեղանունների բառարանում չի հիշատակվում նման ոչ մի տեղանուն, մինչդեռ եթե դա լիներ բնիկ բառ, այն պիտի տարած լիներ Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմերում: Այս պայմաններում, շարադրված ենթադրույթի շրջանակներում *կուր* արմատի այսաստիճան տարածվածությունը Հայքի եւ հարակից վայրերի տեղանուններում եւ դրա բացակայությունը՝ Հյուսիսային Կովկասում, հակառակը՝ վկայում է դրա հայկական ծագումը: Հատկապես, որ այդպիսի առնվազն մեկ տեղանուն կա նաեւ Հայքի հյուսիս-արեւելյան նահանգներից բավականին հեռու Համշենում այն է՝ *Մելակուր*

որը նշանակում է «սելջուր»: Այսպիսով ամեն ինչ խոսում է արեւելակովկասյան լեզուներում այս բառի՝ հայերենից փոխառյալ լինելու օգտին:

Յետաքրքիր է, որ Ա. Վ. Տվյորդիի վերոհիշյալ բառարանում այնուամենայնիվ *-կուր* վերջավորությունով մի անվանում կա, թեեւ նորագույն ժամանակներում ծագած: Դա *Ալեկուր* բուժիչ ծծմբային աղբրի անունն է, որը գտնվում է Տուապսեի շրջանում: Բառարանում այս մասին գրված է հետևյալը. «*Алекур – целебный серный источник в Туапсинском районе Краснодарского края, находится в 30-ти км от поселка Терзиян. В основе перевода гидронима лежит армянское ал – «соль», кур – «вода». «Соленая вода» (амшен.). Название дано в начале XX века армянскими переселенцами из Туруции.*»⁶ Թե ինչի վրա հիմնվելով է հեղինակը ստուգաբանել *կուր* բաղադրիչը որպես հայ. «ջուր» պարզել չհաջողվեց, սակայն չի կարելի բացառել, որ նրան հայտնի է մեզ անհայտ մի ինչ-որ բարբառային ձեւ:

Վերջապես, *Կուր* գետի հնդեւրոպական ծագման օգտին է խոսում նույնանուն գետի գոյությունը Ռուսաստանում (այս *Կուր*՝ ռուս. *Кур* գետի վրա է գտնվում այդ գետից անուն ստացած *Կուրսկ* քաղաքը): Այս գետանունը համարվում է ռուս. *курья* «գետածոց», «գետագալար» հասկացությունից բխած: Եւ ահա, կովկասյան *Կուր* գետը նույնպես հարուստ է գետածոցերով եւ գետագալարներով (հատկապես վերին՝ Կարսի բարձրավանդակում, եւ ստորին՝ ճահճոտ, դանդաղընթաց հոսանքներում):

Ուտիք

Ելնելով Ռուսա Ա-ի այն հաղորդման վրա, ըստ որի «*այն կողմից ծովափյն գաւառում*» եղած 19 երկրները գտնվում են լեռան *ստորոտում* (սեպագրում՝ *կուլ-րու-նե*) Յ. Կարագոյոյանը ենթադրում է, որ այդ երկրների մի մասը կարող էր գտնվել Սյունիքում, բայց մի մասն էլ՝ Արցախում եւ Ուտիքում, եւ առաջարկում է Ուտիք նահանգի անվանումը ստուգաբանել հայերեն *ուտք* բառի հիման վրա:

Սակայն սեպագիր հիշատակության մեջ *ստորոտ* բառը կիրառված է շատ չէզոք համաշարում, բոլորովին չակնարկելով որեւէ կապ այդ երկրների հնարավոր հավաքական անվան հետ: Սյուն կողմից, հայոց երկրանունների շարքում կա երեք գավառ՝ *Արագածոտն*, *Մասեաց ոտն*, *Շաղկոտն*, որոնց անվան մեջ մտնում է հաստատապես *ուտք* բառիմաստը, սակայն ոչ թե *ուտիք*, այլ *ոտն* ձեւով: Վերջապես, *-ք* ածանցը տեղանվանակերտ է. այն անմիջական կապ չունի *ուտք* բառի *-ք* ածանցի հետ եւ հուշում է, որ խոսքը վերաբերում է այս բառի արմատի հասկացության տարածման

⁶ *А. В. Твердый, Кавказ в именах, названиях, легендах: опыт топонимического словаря, Краснодар, 2008.*

վայրին: Բայց հազիվ թե գավառի անունը նշանակեր «ոտների (կամ թեկուզ՝ ստորոտների) տարածման վայր»:

Իսկ սովորաբար այս անվանումը համարվում է *ուտի* ցեղանունից ծագած: Այս բացատրությունը, թեեւ նախորդի համեմատ ավելի հավանական է թվում, սակայն այս անգամ էլ չստուգաբանված է մնում *ուտի* ցեղանունը:

Սակայն այս վարկածը, թերեւս դեռ զարգանալու ներուժ ունի: Կարծում եմ, *Ուտիք* անվանումը իրոք ծագում է *ուտի* հասկացությունից, որը սակայն ներկայացնում է ոչ թե ցեղանուն, այլ հավաքական՝ «արեւելից» իմաստը, զարգացած վերականգնվող *ուտ*՝ «լույս», «արեւելք» հասկացությունից: Ըստ այդմ, ավելի արդյունավետ է այս բառի արմատի համեմատությունը այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են հայ. *մութ*, ռուս. *мутъ*⁷ «պղտորություն», գերմ. *matt*՝ «պղտոր», անգլ. *mud*՝ «ցեխ», *muddy*՝ «մթազևած» եւ այլն: Սրանց բոլորի ընդհանուր իմաստը կարելի է վերականգնել, որպես «ոչ մաքուր», «ոչ լուսավոր»: Այս կառուցվածքով բառերում *մ*-մասնիկը կարող է ժխտական լինել՝ հեն. *mē* ժխտականից: Սրանց ուղիղ, դրական ձեւը թերեւս ներկայանում է ռուս. *чисто*՝ «առավոր», գոթ. *ūhtwō* «արշալույս», որոնց նախաձեւը գուցե կարող է լինել հեն. **eut*՝ «լույս», որը հայերենում տվել է *ութ*՝ «լույս» (ժխտական՝ **mē-ut*՝ «մութ»), բայց նաեւ՝ *ուտ*, սաստկական *վ*-նախածանցով՝ *վուտ*՝ «մաքուր»: Բառավերջի *թ* հնչյունի շնչազրկման հնարավորությունը հաստատում է նաեւ բարբառային *մուտ* ձեւի գոյությունը:

Այս *ուտ* ձեւը *-ի* ցեղանվանակերտ վերջածանցով (ինչպես՝ *վրացի*, *ասորի* եւ այլն) կարող էր տալ *ուտի*՝ «արեւելից» հավաքական իմաստը, որից էլ *-ք* տեղանվանակերտով՝ *Ուտիք*՝ «արեւելիցների երկիր»: Մի բան, որ հաստատվում է Մովսես Դասխուրանցու «Աղվանից պատմության» մեջ կիրառվող «արեւելից» ածականի մեծ հաճախականությամբ. «Արեւելից կողմանք», «արեւելյաց սահմանք», «Արեւելից ծով» եւ այլն: Պարզ է, որ այս դեպքում *ուտի* հասկացությունը սկզբնապես չի ունեցել ցեղանվան արժեք, նշանակելով միայն Չայքի կենտրոնական նահանգներից դեպի արեւելք գտնվող բոլոր երկրամասերի բնակիչներին՝ անկախ ցեղական պատկանելությունից: Դա կարող էր շփոթություն առաջացնել: Եւ իրոք, հույն ու հռոմեացի հեղինակները հիշատակում են *ուտ/ուտ* արմատով Չայքից դեպի արեւելք գտնվող մի շարք համահունչ, բայց իրար հետ կապ չունեցող ցեղանուններ⁸: Սակայն հետագայում, այդ արտաքին անունը կարող էր վերագրվել որոշակի մեկ ցեղի (աղվանական), որն էլ որոշ ժամանակ

⁷ Պետք է նկատել, որ թեեւ այս շարքի ռուս. *мутъ*՝ «պղտորություն» բառը Ֆասմեռը ու Չեռնիխը համարում են հեն. **menth*՝ «խառնել» բառից ծագած, սակայն դա լավ է համապատասխանում միայն բայական ձեւերին՝ *мутить*, *смущать* եւ սրանցից գոյացած գոյականներին. *смута*՝ «խառնակություն», *мутовка*՝ «խառնիչ» եւ նամա այլն իմաստներին: Սակայն ավելի հավանական է թվում, որ *мутъ* գոյականը եւ սրանից գոյացած *мутный*՝ ածականը սուկ պատահական նմանություն ունեն նախորդների հետ:

⁸ Ա. Յ. Չակոբյան, Ալբանիա-Աղվանքը հունա-լատինական եւ հին հայկական աղբյուրներում, Ե. 1987:

անց կարող էր ընդունել այն նաեւ որպէս ինքնանվանում: Տրամաբանական է, որ դա պէտք է լինէր արեւելաբնակ հայերին՝ *հայ ուտիներին* առավելագոյնս նման ցեղ, իսկ այդպիսին օրինաչափորէն կլինէր քրիստոնյա որեւէ ցեղ (նաեւ՝ լեզգիալեզու): Ինչը եւ եղավ:

Շարադրված վարկածի շրջանակներում *ուտի* ցեղանվան ձեւավորումը նմանվում է եւրոպական *ավստրիացի* (*Österreicher*) ազգի ինքնանվան ձեւավորման ընթացքին, որը նախապէս նշանակել է «արեւելյան պետություն»:

Չետաբոքօր է մի հանգամանք եւս: *Ուտիք* անվանման մեզ հասած հնագոյն ձեւը հունական *Չտիցի* (*Օւտենէ*) է: Սակայն Արցախ նահանգի համար բացի հունական *Օրչիստիցի* (*Օրիսիստենէ*) ձեւից մենք ունենք ավելի հին՝ Սարդուրե Բ-ի սեպագիր վկայությունը՝ *Urtehini* (*Ուրտեխինի*): Այս բառի մեջ բառահիմքն է *Ուրտեխ*, որի արմատն է, թերեւս *Ուրտ*, իսկ *-եխ*-ը՝ ածանց. հավանաբար՝ տեղանվանակերտ, որը կարող էր համապատասխանել հայերենի *ք*-ին: Իսկ այս *Ուրտ* արմատում էլ, *ր*-ն, հավանաբար ածական է, ինչպէս ունենք *Βασίλειος > Բարսեղ*, եւ արմատի բուն հիմքը մնում է *Ուտ*, նույնանալով *Ուտիք* անվան հիմքին: Այսպիսով *Արցախ* եւ *Ուտիք* անվանումները ներկայացնում են, միեւնոյն «արեւելք» իմաստով բառի տարբեր զարգացումները: Գուցէ հենց դա է պատճառը, որ մեզ հայտնի չէ *Ուտիքի* սեպագիր ներկայացումը, քանի որ այն ժամանակ այդ երկու նահանգները դեռեւս դիտվում էին որպէս մեկ ամբողջություն, որն ավելի ուշ միայն տրոհվեց: Դա կարող էր տեղի ունենալ սեպագրի դարաշրջանի ավարտի եւ հնաշխարհիկ հնագոյն վկայությունների միջեւ, այսինքն մոտավորապէս՝ մ. թ. ա. 2 – Ա դարերի միջեւ:

Լեզգի

Այս ձեւով ցեղանունը հայտնի է առնվազն ԺԲ դարից: *Ալ-Լալկ* թագավորությունը արաբ հեղինակները հիշատակում են Ժ դարից: Գրելով Աղվանքի բնակչության մասին հնաշխարհիկ հեղինակները՝ Ստրաբոնը, Պլուտարքոսը, հաղորդում են *լեզերի* մասին՝ *λήγες, legoi*: Այդ ցեղանվան ձեւը առավել մոտ է ներկայիս *լակերի* անվանը:

Այս ցեղանունների վերջնական ստուգաբանություն չի առաջարկվել: Ոմանք (Վ. Ի. Աբայեւ, Վ. Ֆ. Մինորսկի), այս ցեղանունը ստուգաբանում են կովկասյան մի շարք լեզուներում գործածվող *լեզ*՝ «մարդ» հասկացության հիման վրա: Այս մոտեցումների շրջանակներում սկզբնական ձեւը եղել է *լեզ*, ապա՝ *լակկ*, եւ միայն դրափոխությամբ՝ *լեզգ*:

Ըստ Մ. Գ. Մագոմեդովի «անդրկովկասյան աղբյուրներում *լեզ* են անվանում Դաղստանի բոլոր ժողովուրդներին»⁹: Ի. Խ. Աբդուլաեւն էլ համարում է, որ *լեզգի* անվանումը «բոլորովին խորթ էր

⁹ *М. Г. Магомедов. История аварцев. Махачкала, 2005.*

դադստանյան ժողովուրդներին»¹⁰ եւ որ լակզ ձեւը բացառում է սկզբնական լինելը, քանի Դադստանի ոչ մի ժողովուրդ այդ ազգությունն այդպես չի կոչել¹¹:

Ելնելով վերոհիշյալից իմաստ ունի *լեզգի* ցեղանվանը մոտենալ այլ դիրքերից: Այն է, որ եթե *լեկ* եւ *լեզգի* ցեղանունները գործածվել են որպես Աղվանքի ազգերի հավաքական անուն, տրամաբանական կլինի ենթադրել, որ սրանք նախապես եղել են աղվանական ազգերի *արտանուններ*, եւ հետո միայն դարձել են *ինքնանուններ*: Այդպիսի հավաքական անվան համար կարող էր հիմք դառնալ աչքի զարնող Կովկասի ցեղային եւ լեզվական բազմազանությունը, որը կտրուկ հակադրվում է հարեւան երկրի՝ Չայքի լեզվա-ցեղային միատարրությանը եւ որը համաձայն Ստրաբոնի հաղորդման եղել է առնվազն Արտաշեսի ժամանակներից: Այսինքն կովկասյան ազգերին կարող էին անվանել հավաքական «ազգեր» իմաստն ունեցող որեւէ բառով:

Այս կապակցությամբ նկատենք *լեզգի* ցեղանվան աչքի է ընկնում նմանությանը հայերեն *լեզու* բառի հետ: Թվում է, որ դա պատահական չէ: *Լեզու* բառը հայերենում եւ մի շարք այլ լեզուներում ունի նաեւ «ցեղ», «ազգ» իմաստը: Այսպես է նաեւ ռուսերենում, ինչն արտահայտվում է *язы́ку*՝ «ազգեր», *язычи́ку*՝ «ցեղապաշտներ» բառերում: Նաեւ ֆրանսերենում (ըստ Մ. Ֆասմերի) բառի այդ իմաստը թերեւս պահպանվել է *Languedoc* երկրանվան մեջ: Չետեւապես, բնական կլիներ, եթե Չայքի միատարր լեզվական միջավայրից դիտողները կովկասյան տարածաշրջանի բնակիչներին անվանեին «լեզուներ» հավաքական եզրով, սակայն ոչ թե *-ներ* այլ *-ք* հոգնակիակերտ ածանցով: Կարող է անհաջող թվալ բառի ձեւը, քանի որ այդ դեպքում պիտի ստացվեր *լեզուք*: Սակայն պետք է հաշվի առնել, որ *լեզու* բառը հեն. *дэгъуа̄* ձեւից առաջացած լինելով (որը հայերենում պիտի տար *տանձու*) կրել է մեկ այլ՝ հեն. *leig^h* «լիզել» արմատի ազդեցությունը (որը հայերենում տալիս է *լեզ*) եւ ստացել այժմյան ձեւը: Տվյալ դեպքում կարելի է ենթադրել, որ *լեզ* արմատը, ամբողջովին իր վրա է վերցրել «լեզու» իմաստը եւ բառը ստացել է *լեզ* ձեւը, իսկ հոգնակին՝ *լեզք*: Չետագայում նախորդ *զ*-ի պատճառով վերջին *ք*-ն ձայնեղացել է, սրան էլ հավելվել է ցեղանվանակերտ *-ի* ածանցը եւ վերջապես դրափոփությամբ էլ գոյացել են նաեւ *լեզզ*, կամ *լեկս* ձեւերը:

Այս ենթադրույթի շրջանակներում լուծումն են ստանում նաեւ *լեկ*, *լեզ* ձեւերը: Ինչպես գիտենք հեն. *leig^h*-ի ետնալեզվային քմայնացած շնչեղը հայերենում տալիս է *զ*, սակայն այդ գործընթացը պահանջում է որոշակի ժամանակամիջոց: Այսօր մենք չենք կարող հաստատապես ասել, թե երբ է այն ավարտվել: Ե դարում այն արդեն ավարտված էր, սակայն դրանից առաջ հայերենում (կամ առնվազն որոշ բարբառներում) դեռ կարող էր պահպանվել հնագույն ձեւը՝ *լեզ^h*>

¹⁰ И.Х. Абдуллаев, К.Ш. Микаилов К истории дагестанских этнонимов лезг и лак // Этнография имен. — Наука, 1971. — С. 13-26.

¹¹ Ըստ Рамазан Маршаев, Бута Бутаев. «История лакцев». Махачкала, 1991.

լեզ^hք, որը Ստրաբոնը եւ հնաշխարհիկ մյուս հեղինակները կարող էին արձանագրել *λήγες, legoi* ձեւերով: Եւ գուցե շնորհիվ ցեղանվան վերածվելուն դրա հնչյունային պատկերը կարողացել է անփոփոխ հասնել մինչեւ մեր օրերը՝ *լալ/լել* ցեղանվան տեսքով: Հավանաբար, ավելի ուշ, երբ հայերենում կատարվել է *g^h>y* անցումը (մոտավորապես Բ–Գ դարերում) գործընթացը կրկնվել է. արեւելակրովկասյան ազգերին անվանել են նույն տրամաբանության շրջանակներում, սակայն արդեն հնչյունափոխված ձեւով՝ *լեպ>լեպհ*: Հետագայում դրափոխությամբ գոյացել է *լեբ* ձեւը (այն պիտի կատարվեր առնվազն մինչեւ Ժ դարը, երբ արձանագրվել է *Ալ-Լալկ* թագավորության գոյությունը): Սակայն կարելու է նկատել, որ այս *լալկ*-ի *կ*-ն ծագում է հայերեն հոգնակիակերտ-ցեղանվանակերտ *-ք*-ից, հետեւապես այլ ծագում ունի, քան թե հեն. **leig^h*-ից գոյացած *լել* ցեղանվան *կ*-ն, որը գալիս է արմատի հնագույն **g^h*-ից:

Այսպիսով, շարադրված ենթադրույթի շրջանակներում *լել/լեպհ* ցեղանունները, ինչպես եւ *ուտի*-ն սկզբնապես չեն ունեցել որոշակի ցեղային իմաստ, եւ հետագայում են միայն վերագրվել արեւելակրովկասյան ցեղերի մի մասին: Այստեղ հեռավոր նմանություն կա այն երեւույթի հետ, երբ սլավոնական ազգերի կողմից բոլոր օտարախոսները անվանվում էին *hemeu*՝ «համր» իմաստով, որը հետագայում վերագրվեց դրանցից հատկապես մեկ ազգի՝ գերմանացիներին: Մեր դեպքում, հավանաբար այդ գործընթացի համար խթանիչ եղավ Ալ-Լաբզը թագավորության կազմավորումը, որն էլ արդեն իր անունը հաղորդեց իր հպատակներին. ինչպես դա եղավ նախորդ բաժնում հիշատակված *Ավստրիա* պետության եւ *ավստրիացի* ազգի դեպքում:

Վերջապես, քանի որ այս արտանունը չուներ ցեղային իմաստ, այն կարող էր դառնալ ոչ միայն լեզգիալեզու, այլեւ այլ ազգերի ինքնանվանումը: Եւ իրոք, մեկի մասին արդեն խոսվեց վերելում. դա կարող էր լինել իրանալեզու նույնանուն *լել* ցեղը: Որպես եւս մի ցեղ, որն այս արտանունը ինքնանվանում է դարձրել կարելի է դիտել այս անգամ արդեն քարթվելական լեզվախմբի ներկայացուցիչ *լալ* ցեղը, որի պետական կազմավորումը հայտնի է *Լապ* ձեւով՝ այս անգամ արդեն առանց դրափոխության: Դրանից բացի հայ մատենագրությունը հիշատակում է մի շարք տեղանուններ արդեն Հայքի տարածքում՝ *Լեկք*, *Լեպք* եւ այլն: Վերջինը ստուգաբանվել է «լիզել» իմաստի հիման վրա, ժողովուրդը կապել է այն *արալեպների* հետ, կամ այն դիտվել է որպես *լել* ցեղի բնակության վայր: Եթե ճիշտ է առաջարկվող ենթադրույթը, ապա նման տեղանունները կարող են վկայություն լինել հնում այս բնակավայրերի խառն ու այլազգի բնակչություն ունենալու մասին (բայց ոչ որոշակի որեւէ մեկ ազգի պատկանող)՝ որոնք առանձնացել են շրջապատող միատարր հայ բնակչության միջավայրում: